



## ՀԱՏԾԵՑԻՐ ՀԱՏՎԱԾՆԵՐ ԱՎԱԳ ՇԱԲԱԹՎԱ ՇԱՐԱԿԱՆՆԵՐԻՑ

### ՇԱՐԱԿԱՆ ՇՍՂԿԱԶԱՐԴԻ

Թագաւոր գոլով քո յաշխարհ,  
Մըսներ ի քաղաքն Երուսաղէմ,  
Նստեալ ի վերայ հողեղէն նոր յաւանակի,  
Կոչել զհեթանոս յերկրպագործին:

Ծերքն ոստովք ձիթենեօր  
Եւ տղայքն ոստովք արմանենեօր,  
Եւ երամ երամ դասուքն աղաղակէին,  
Ովսանենա՝ օրինեալ եկեալ ի յանոնըն Տեառն:

Ցընծացաւ սուրբ Սիոն.  
Բերդիեցան սուրբ եկեղեցիք,  
Եւ խնդութեամբ քազմաւ եին ընդ առաջ,  
Օրինէին զգալուստ քո Փրկիչ յաշխարհ:

Յորժամ եկըն Յիսոս յերուսաղէմ ի  
քաղաքն,  
Ընդ առաջ եին ծերքն ոստովք ձիթենեօր,  
Եւ զԱստուածորդին փառատրէին:

Ի լեռնէն ձիթենեաց տարածանէին  
Մանկունք զիանդերձն իրեանց.  
Եւ ոստ ի ծառոց թերեալ մատուցանէին  
Աստուածորդույն՝ սուրբ Թագաւորին:

Ոստովք և տերնեալ ձիթենեօր  
Երրայեցոց մանկունքն օրինէին.  
Ուրախ լե՛ր, Երուսաղէմ քաղաք,  
Եւ ցնծա՛ Սիոն, Մայր եկեղեցի:

### ՇԱՐԱԿԱՆ ԴՐԽԲԱՑԷՔԻ

Ընորհեա՛ մեզ, Տէ՛ր, արթնութիւն ընդ իմաստոն կուսանացն.  
Եւ զիոգոց մերոց լապտերսն պայծառացն՛:

Երկնչմք ի քէն, Տէ՛ր, զարհուրեալք ի պատասխանույն,  
Զամէնն ասելով եթէ ոչ գիտեսն ըզձեզ:

Յորժամ գաս փառօք Հօր դատել զտիեզերս ամենայն,  
Ընորհեա՛ և մեզ, Տէ՛ր, կալ ի յաջմէ քումնէ:

Բացցի մեզ դուռն ողորմութեան երկնաւոր Փեսային,  
Եւ մոցոր ի յառագաստ ընդ իմաստուն կուանսն:

Ժամանեցոր ընդ առաջ Փեսային և մշտցոր ի յառագաստ նորա,  
Զի՞ մի' մնացոր արտաքս, որպէս զիմար կուանսն:

Պայծառացին լապտերը հոգոց մերոց և բազմեցուցես ըզմեզ  
Ընդ հրահրեալսն ի կոչումն արքայութեանն երկնից:

### ՇԱՐԱԿԱՆ ՈՏՆԼՈՒԱՅԻ

Այսօր կանգնեցաւ առազան մկրտութեան  
Ի թողութիւն մեղաց մերոց:

Այսօր Տէրըն մեր լրանայր զոտս աշակերտացն  
Եւ պատուիրէր զայս ասելով.

Մի ոմն ի ձէնչ, եղբարք, մատնելոց է զիս ի մահ,  
Եւ որոշի յաշակերտացդ:

Զայն լրեալ Պետրոսի ակնարկէր առ Յովհաննէն՝  
Հարցանել թէ ո՞վ իցէ:

Բանցն զոր ասաց Յիսուս՝ տղրտմեցոյց զիր զաշակերտսն.  
Եւ խորվեցան ամենեքնան:

### ԳԱԽՉ ՈՏՆԼՈՒԱՅԻ

Այս խորհուրդ լրցաւ.

Անդ գուշակեցաւ.

Աստ կատարեցաւ:

Աստուած մարդացաւ.

Ընդ օրինօք մըտաւ.

Քահանայացաւ:

Նոր խորհուրդ բացաւ.

Որ ի ծունկս անկաւ.

Ղենջակ ըսփածաւ:

\* \*

\* \*

Սիրտ իմ սասանի.

Սարսափ զիս ունի.

Վասըն Յուդայի:

Նա ո՞չ ամաչէ,

Եւ ո՞չ զարհուրի,

Սիրողն արծաթի:

Նոր սեղան դընի.

Եւ հաց բաղարջի.

Եւ անապակ գինի:

\* \*

Տէր իմ, արծանի

Արա' ըզմեզ հացի,

Քո սուրբ սեղանի:

Աստուածն ամենի, Միածին Որդի,  
Կամաւ Հօր Հոգույն ճշմարտի, յերկիր  
խոնարին:

Ցընծացոր հոգուվ, զնոյն ճաշակե-  
լով.

Փառք Հօրըն տացոր, և Հոգուն,  
Միածնի մարմնով:

### Ա. ՍՍՀԱԿ ՊԱՐԹԵՒ

ԿԱՆՈՆ ՄԵԾԻ ԾԱԲԱԹՈՒՆ ԹԱՂՄՄԱՆ ՏԵԱՌՈ ՅԻՍՈՒԽԻ

Պարգևատուն ամենեցուն, այսօր խընդրի պարգևս ի Պիղատուէ.

Եւ արկողն ըզլոյս որպէս զօթոց հաւանի պատիլ ի Յովսելիայ:

Կենդանատուն ամենեցուն, այսօր դընի ի նոր գերեզմանի.

Եւ գանձն անմահութեան կընքի մատանեաւ քահանայիցն:

Արարածոց փրկութիւն Քրիստոս, այսօր եղաւ ի նորափոր վիմի.

Զոր օրինեն զօրք երկնից՝ երգով պահպանի ի զինուորացն:

Կենդանին յախտենից Քրիստո, այսօր խընթի որպէս մռնալ ի Պի-  
դասոսէ.

Եւ մերկութեան ծածկոյցն Աղքամազ յանձն առնու պատիլ ի Յովսեփիա:

Անմահութեանց տուող Քրիստո, այսօր ի նոյ մասու խոնարհեցա.  
Եւ բնակեալն ի լոյս անմասոյց, թաղեցաւ մարմնով ի սիրտ երկրի:

Արեգակն արդարութեան Քրիստո, այսօր եղան ի գրի սոսուերականի.  
Եւ փառացըն Հօր ճառագայթ, ծածկեցաւ վիմով ի մէջ երկրի:

Կուսածին մարմնով Քրիստո, այսօր ողօնի ի կոյս գերեզմանի.

Եւ լոծիչն երկաց ողժութոց, մատանեան կընքի քահանացիցն:

Արթոն բնութեամբ Արարիշն ամենեցուն, այսօր նընջէ ի մէջ մահացելոց.  
Որ պահէն զիսրայէլ անքուն՝ պահպանի ի զինուորացն:

## ՆԵՐՍԻՆ ԼԱՄԲՐՈՆԱՑԻ

### ԿԱՆՈՆ ՍՐԲՈՅ ԶԱՏԿԻՆ

Այսօր յարեաւ ի մռելոց Փեսայն անման և երկնաւոր.

Քեզ աւետիք խնդրութեան, հարսն ի յերկրէ եկեղեցի.

Օրհնեա' ի ձայն ցընծութեան, զԱսուած քո Սիոն:

Այսօր անձառ լոյսն ի լուսոյ, լուսաւորեաց զմանկունըս քո.

Լուսաւորեա' Երուսաղէմ. քանզի յարեաւ լոյս քո Քրիստո.

Օրհնեա' ի ձայն ցընծութեան, զԱսուած քո Սիոն:

Այսօր յարեաւ անգիտութեան հաղածեցաւ երրեակ լուսովն.

Եւ քեզ ծագեաց լոյս գիտութեան յարուցեալն ի մռելոց Քրիստո.

Օրհնեա' ի ձայն ցընծութեան, զԱսուած քո Սիոն:

Այսօր Զատիկ մեր զենմամբ Քրիստոսի

Արացուք Տօն ցընծութեամբ,

Նորոգեալքս ի հնութեան մեղաց ասելով.

Քրիստոս յարեաւ ի մռելոց:

Այսօր հրեշտակըն լուսափայլ ի յերկնից իջեալ

Զարհուրեցոյց զպահապահնան.

Եւ սուրբ կանանցըն քարոզէր ասելով.

Քրիստոս յարեաւ ի մռելոց:

### ՏԱՂ ՅԱՐՈՒԹԵԱՆ

Գովեա', Երուսաղէմ, ղզՏէր:

Յարեա' ի Քրիստոս ի մռելոց, ալէ՛լուիա:  
Եկայք ժողովուրդը, երգեցէր Տեառն,

ալէ՛լուիա:

Յարուցելոյն ի մռելոց, ալէ՛լուիա,  
Որ զաշխարհըն լուսաւորեաց, ալէ՛լուիա:

### ՏԱՂ ՅԱՐՈՒԹԵԱՆ

Ի գերեզման յարուցելոյն Անմահին,  
Այսօր գոչէ հրեշտակն երկնային,  
Յարեա' ի Քրիստոս, զարթեա' ի Քրիստոս,  
Ի կոյս գերեզմանէն, ի լոյս գերեզմանէն:  
Պահապանքըն զարթութեցան ի յամին.  
Քանզի ի լոյս ի նորափոր տապանէն,

Յարեա' Քրիստոս, զարթեա' Քրիստոս,  
Ի կոյս գերեզմանէն, ի լոյս գերեզմանէն:  
Առ սուրբ վիմին նստեալ գոչէր հրաշալին,  
Խոլաքերըն քարոզելով ծաղկէին,  
Յարեա' Քրիստոս, զարթեա' Քրիստոս,  
Ի կոյս գերեզմանէն, ի լոյս գերեզմանէն:

## ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻ

### ՏԱՂ ՅԱՐՈՒԹԵԱՆ

Փառք Քրիստոսի ամենազօր յարութեան:

Սայլն այն իշխնէր ի լեռնէն ի Մասեաց,  
և ի վերայ նորա այսոոք են կարգեալ,  
և ի վերայ նորա գահոյք ուկեղէնք,  
և ի վերայ նորա բեհնեզք ծիրանիք,  
և ի վերայ նորա որդի արքայի,  
և յաջմէ նորա վեցթևեան սերովքէքն,  
յահեկէ նորա բազմաչեայ քերովքէքն,  
առաջի նորա մանկունք գեղեցիկ,  
ի գիրկս նոցա խաչն տէրունական,  
ի ձեռին նոցա սաղմոսարան և քնար,  
որք երգէին և ասէին՝

Փառք Քրիստոսի ամենազօր յարութեան:

Ածեալ են ածեալ զայշիկն,  
ածեալ են կացուցեալ.

և ահա շշարժէր սալիկն այն,

և ահա չխաղայր անիւն այն:

Եթէ հարիր բարդ խոլրան, վեց կորնկան,  
մին մանուշակ խրձադիզեալ.

ի Մասեաց յաջ կողմանէն

սալիկն ածեալ են կացուցեալ,

և ահա շշարժէր սալիկն այն,

և ահա չխաղայր անիւն այն:

Եթէ սամիրն են արծաթի, լուծն էր ոսկի,  
և սամոտիքն ապրիշիմի.

փոկեր շարած շարանման հոյլ մարգարիտ.

և ահա շշարժէր սալիկն այն,

և ահա չխաղայր անիւն այն:

Այն ճորտն ճոճ էր և ճայուկ,  
ուռամիշակ, հաստարազուկ,  
լայնաթիկունք, խարտիշագեղ, ահեղագոչ,  
նա ձայն ածէր եզնամոլին,  
կանչին առնէր աթոռակին:

Եթէ եզինքն են սայթ ու սպիտակ,  
ծաղկախաստուցք, արագաքայլք, ընթացականք,  
եղշիրն ամէն խաչանման,  
և մազն ամէն հոյլ մարգարիտ.  
և ահա շարժէր սալիկն այն,  
և ահա չխաղայր անիւն այն:

Ի յառեղէն առեալ շարժումն կուրծն սալին,  
նա ձայն ածէր եզնամոլին:

Սայլն ի Սինեայ երկրորդ օրէնքն էր Մովսէսի.

Եւ այն հարիր բարդ խոլրանն՝

այն նահապետքն են՝ մարգարէք.

Եւ այն վեց բարդ կորնկանն՝

վեցօրեայ գործքն Աստոծոյ.  
 Եւ այն մին մանուշակ՝  
 միաւորեալ Երրորդութիւնն:  
 Եւ այն մանուկ խարտիշագեղին՝  
 այն Յովհաննէսն էր Ակրտիչն.  
 Եւ այն չորս կործն սային՝  
 Աւետարանն էր Քրիստոսին:  
 Ի գիլ գայր ի գիլ, սայլիկն ի գիլ  
 ի Մասեաց յաջ կողմանէն՝  
 սայլիկն ի գիլ գայր ի գիլ  
 և ճոնչապով գայր մտանէր յԵրուսաղէմ,  
 և որդիք նոր Սիովնի նոր երգէին գայս ասելով.  
 Փառք Քրիստոսի ամենազօր յարութեան:

